

Ս Լ Ե Ր

ՄՏԵՐԻՄ ԺՈՂՈՎՐԴՅԱՅՑ

Ըստածը երկու պատմ
կը հրատարակուի :
Ստորագրութեան տեղն
է իմամ Ալի խան վա-
րի յարկը թիւ 15 :



Տարեկան գիմն է կամիսիկ
լրու 100 :
Դուրսերէն բաժանորդ
եղաները փոստայն
ծախը վճարելու և :

ՅՈՒՆԻՄ 40

Գ. ՏԱՐԻ

1863

Թիվ 18—19

ԵՄ ՏԱՐԻԿԵՆ

ԸՆՏԱՆԵԱՅՅ ՄԱՅՐԵՐՈՒ ԴԱՏԻԱՐԱԿՈՒ
ԹԻՒՆԱ

Տիւ թիւ 14—15 .

ԳԼՈՒԽ Լ.

Արդի գաստիարակութեան և անոր անբա-
ւական ըլքալուն վրայ :

Մանկամարդ կին մը որ աշխարհի
մէջ կը մանէ , ուրիշ բան չի տեսներ
եթէ ոչ իր ընդունախութեանը ծառա-
յոլ բաներ : Երջանկութեան վրայ ու-
նեցած շփոթ գաղափարը և իր բոյքարի-
քըն եղած բաներուն ազմուկը՝ հարզի-
րէ որ բնութեան ուրիշ բաներուն ձայնը
չ'սէ : Վ օլլես ճառ բնադանցութեան :

Արշափ ծնողը իրենց գատերաց կը ը-
թութիւնը կատարեալ ըրած կը կար-
ծեն , երբ անոնց ուսուցիչներ կը վար-
ձեն : Տիէն Պետուիէ . ճառ՝ ի Քերայ դա-
տիարակութեան հանանց :

Կորացանցիւը մարդու բնածին կատա-
րելութիւնը յայտ բերել . ահա գաստի-
արակութեան նպատակը : Վասնդ :

Ֆէնէլոնէն և Արուսոյէն ՚ի վեր , մար-
դոց մէջ յառաջազիմութիւն եղաւ ; և

կանանց գաստիարակութիւնն ալ օկուտ
աեսաւ : Այլ ևս վէճ չկայ սա ինչպայն
վրայ թէ արդեօք կանայք հրահանգել
արժան է ; կամ թէ ի՞նչ աստիճանն հը-
րահանգել արժան է : Կանանց միտքը
զարգացնելու վրայ ամեն մարդ միաբան
է . մանաւանդ ումանքաւելի յառաջ կ'եր-
թան . անոնց արուեստգիտութեան տա-
գանդ ալ կը չնորհէն , և զիտութեանց
վարդապետներ կը ըսնեն : Կանայք հի-
մա համարածանի ուսմանց վրայէն քե-
րելու կ'անցնին . բայց բոլոր աս ուսմանց
մէջ տակաւին իրենց բուն մտքովը խոր-
հելու սկած չեն . զարոցական տետրակ-
ները միանց անոնց ըզեղնն մէջ կը ող-
պատրուին . ուստի , երբ կիբքերը կը
հանին , (կիբքեր՝ որոնց դէմ որչափ տ-
ապաքինութեան վարժութիւն , որչափ հո-
գոյ զօրութիւն , որչափ կրօնական ըն-
կըզըսնք հանենք բաւական չէ) , երբ ,
կընենք , այսպիսի կիբքեր կը հանին ,
մեր կանանց մատուցները գաշնակ հար-
կանելու կիրթ կը դանուին , անոնց մի-
շողութիւնը բերնուց բան խոսելու վարժ
է , բայց անոնց անձն ՚ի քուն է : Ահա
ւասիկ , քիչերն ՚ի բաց առնելով , մեր
զարուն կանանց սրուած կրթութիւնը :

ասով հանդերձ մասր մասր ջերմեռան-
դութիւններ , գալրոցի բարոյական մը ,
հարեանցի տաղանդներ , զուարճութեան
ոէր , կեսաց բոլոր բաներուն տղիտու-
թիւն , և վերջապէս՝ սիրելու և սիրելի
ըլլալու պէտքն անոնց կը սորվեցնէ :

Ոչ թէ աս դաստիարակութիւնն ալ
իր պայծառ կողմը չունի . բանզի ընկե-
րութեան մէջ ճաշակ և արուեստագի-
տական կերպեր , աւելի չորոշք , սովո-
րականէն վեր հանդամանք կը մուծանէ :
Դքսուհին և քաղաքացւոյն կինը կամ
դուստրը (եթէ տակաւին դքսուհի կոյ ,
եթէ տակաւին քաղաքացի կոյ ,) սրահ-
ներու մէջ սրանչելի տաղանդներով իրա-
րու հետ կը մնցն . կին մ . կը յօրինէ
քերթուած մը որ' ի նպաստ Յունաց կամ
Պողոնիացոց (Անհաց) կը վաճառուի .
ուրիշ կին մը կը նկարէ տախտակ (դադ-
չակ) մը որուն գինը բարեպաշտ գործի մը
կը սահմանուի . ամեն կին վայելու և
առանց սիսակի կը զրէ . Անվինեկի և
Լաֆայէթի գրիչները զրէթէ հասարա-
կաց եղած են : Այսպէս դաստիարա-
կութիւնն առ սակաւ սակաւ ընկերու-
թեան մէջ հաւասարակշիւ կ'ըլլայ . դաս-
տիարակութեան միօրինակութիւնը ուամ-
կապէ տութեան զօրաւորագոյնն է . և
չէմ կարծեր թէ նորանշան բան մը ըսած
կ'ըլլամ , եթէ պնդելու ըլլամ թէ աս-
տիճաններու հաւասարութեան համար
աւելի նպաստաւոր եղան կանանց տա-
ղանդները քան թէ մեր ազգային ժո-
ղովներուն բոլոր վիճաները միանդամոյն :

Մեր ամենէն նորաձեւ սրահները մը-
սէք . տեսէք այլ և այլ տիտղօ մար-
դիկ կանդուն կեցած , և զրէթէ մի և
նոյն ասուէ հանդերձ հագած են : Մին
սեղանաւոր է , միւսը Մարզիզ . այլ սմի-
ճարտար , և այլ ոմն ատենակալ : Աղէկ .
թէպէտ ամսոց թուխ հանդերձները
միակերպ են , սակայն անսոնց լեզուին , և
կենալուն մէջ այսպիսի գրոշմ մը կոյ
որ անոնց խտինու աստիճանը կը յայտ-
նէ : Բայց կոնանց մէջ այնպէս չէ . ա-

նոնց չորհալի շարժումներէն , կերպե-
րուն վայելլութենէն՝ ամենը ծննդեամբ
և աստիճանով հաւասար կը կարծես .
ամենուն վրայ մի և նոյն հրահանգը , մի և
նոյն հրապոյրը , արուեստի մի և նոյն ճա-
շակը կը տեսնես : Կօտարի մը դուստրը՝
պալատականի մը , սեղանաւորի մը կամ
զօրապետի մը գոտերէն չես կրնար որո-
շել : Կը տեսնես գեղեցիկ խումբ մը որ
գանձնակին բոլորափը շարուած է . Քու-
սինիի մէկ կտորը նուագելով այնչափ
կայթիւն (ծափաձայնութիւն) կ'ընդու-
նի , որշափ Խտալացի դերասանաց խումբ
մը . բայց ան չքնաղ խումբին մէջ նը-
ուագողներն ո՞վ են . բժշկի մը կին ,
Գաղղիոյ ատենակալի մը դուստր , մար-
զիզուհի մը , արուեստագիտի մը զուս-
տը և գործակալի մը կին . ասոնք որիշ
բանով չեն որոշափի բայց իրենց տաղան-
դին առաւելութեամբը : Հիմա , զար-
ձուր աջուլներդ ան անպաճոյն բայց ըն-
տիր զարդու զարդարուած տիկնուծ վե-
րայ որ ամենուն մաաղբութիւնն իրեն
ձգած է . մեր գեղեցկազոյն զքսուհի-
ներէն մէկն է : Տես , ինչ սիրուն ժպիտ-
նել կ'առնէ և կուտոյ ուրիշ օրիորդի մը
որ եկաւ անոր քով նսաւ : Արդարե-
երկու նշանաւոր կանայք են . զքսուհին
իր որդուցը Լատիներէն կը սորվեցնէ և
վիշպէր կը յօրինէ . միւսը տողեր (սուա-
նաւոր) կը շինէ , բանսաստեղծ է և զե-
ղեցիկ . զարուն կորինէն է . անոր
փառքն՝ ազնուականութիւնն է : Այս-
պէս , ան չքնաղ խումբին մէջ՝ ուր ա-
մենայն ինչ խառն է , ծնունդ , մեծու-
թիւն , տիտղոս , աստիճան , այն չքնաղ
խումբին մէջ բնաւ արատ չկայ . զեղեց-
կութիւնն ամեն . Հայեցուած իրեն կը
ձգէ , տաղանցը կ'որոշէ աստիճանը , և
դաստիարակութիւնը հաւասար կ'ընէ .
Ապաքէն , եթէ կանանց կեսնիքը գոր-
ծանոցներու և տօներու մէջ միայն պի-
տի մնար . եթէ ամսոց գործը՝ զարմացը-
նել և հաճոյ ըլլալ և եթ ըլլար , այն
պիսի երեկոյթներու (սուաբէ) դաստիա-

Նիկմարդուն ծափահար ըլլայ , արուեստագիտի մը ձեռքն ու ոտքը : Աս աւ ընդունայնութիւն է :

Ահաւասիկ զիբքեր որոնց մէջ ծաշակն ընտրութիւն պիտի ընէ . ահաւասիկ Քաօին , Լաֆնդէն , Ֆէնելոն , Պօսիւէ , Բասդալ , Լամարդին , Պէրմարտէն որ Աէն Բիէր : Ալդ , աղջկան մատաղ ովին ընդարձակէ , մէծատուն խորհուրդներով կազմէ , յարդարէ . իմաստուն խրաներով զօրացուք . զեղցին զգացումն անոր մաքէն ցայտել տուք , զգացումն որ երկնաւոր լցո է զօր Աստուած անոր սրտին մէջ զրածէ : Բայց ինչ . իմ դասերս , պիտի ըսեն , աղջիկ մը զիտուն ընելու համար չէն : Բանել կ'ուզես թէ մեր նպատակը յիշողութիւնը նույլ միայն է : Այս , քանի մը տողքերնուց սորված է , աշխարհականութենէ , ժամանակագրութենէ , սրատութենէ կրնայ խոսիլ . քանի մը թուական քանի մը զիտուած պատմել զիտէ . բայց ասո՞ք ոչ ապաբէն ջնարոնկ են որ կարաւոյ մը երեսին փայլիւն կուտայ . ուկեզօծութիւն մը որ անարդ մէտաղի մ'ալ ուկոյ երեցիթը կու տայ : Այսպէս է , սիրտի ըսեն , ոչ այլ ինչ է բայց սուրբ ծեփ կամ զրուադ մը . բայց փոյթէ չէ , բաւական է որ պղնձը չերեւի : Միշտ ընդունայնութիւն :

Ճշմարիտ է որ քանի մը կրօնական կրթութեամբ աս զեղծումը մեզմելու ջանք կայ . բայց այս վանական կրթութիւնը մեր դաստիարակութեանը մէջ միւս ևս արգելք է : Դու աղջիկդաշխարհական զարդուք պճնել կուտաս , անոր երաժշտութեան վարդետ , կաքաւի վարդետ կը բերես , յետոյ կաքաւի երթալ և խնջյեն երուն մէջ երեխլ կ'արգելուս : Մէկ կողմանէ աշխարհք արհամարհել , միւս կողմանէ այսպիսի ուսմունք՝ որ անոր աշխարհական ճաշակ կ'աղցէն : Ընտիր ընտիր թատերական յօրինուածներով աղջկան միտքը կը զարդարես , և տեղարաններն անոր կը վակես . և կ'ըսես

թէ գերասանները վաստանուն մարդիկ են . կուսական վիճակն կը գուլես , և կը հրամայես որ ամուսին առնէ : Միշտ քայլ մը յառաջ և քայլ մը յետոյ . վորձութիւն մը կը յարուցանես , ու բարոյական խրատ մը կուտաս . մողքի մը կը պատրաստես , առաջ խիղճը կը յորդորես : Հնգետասաններորդ և ինն և տասներորդ դարերուն ողորմելի խառնուրդը , որ կը չանայ միենոյն անձն ապաշխարող՝ միանգամայն ալքող ընել . սրահներու ցանկալին՝ միանգամայն վանքի մը հրեշտակը յորդարել : Նախ տես թէ քրիստոնէական վարդապետութեան ու օքերայի մը մէջ ինչ մեծ խտիր կայ , առաջ խորհէ որ ամուսնացող աղջիկ մը կրնայ քսան և չըսր ժամու մէջ , յանզգայս , և որ աւելի ցաւալին է , առանց զգուշութեան դարմանի , մէկէն միւսին անցնիլ : Ասերիու հակառակները բռնի իրարու միանալով , անդէն ի սկզբան իրարու կը զարնեն , և աշխարհիս պատրանացը մէջ կիրքերը նախապաշարմանց հետ կուռելու կը սկսին , մինչ խեղճ անձը զօրութենէ և իմաստութենէ ամեննեին անման է : Խղճին մէջ անգամ ապաստան չունի . իննիկիրը յայտնի է . պէտք է որ նոր հարսնիր ամուսինը դատապարտելոյ աեղ գնէ , և կամ անոր հետ զինքն ալ զատապարտելոյ տեղ գնել յանձն առնու : Ահա մեր յառաջատեսութիւնը և իմաստութիւնը . այսպէս դաստիարակութիւնը մեզ օրէնքը կամ ընութիւնը կարելլը իրցելու կը բռնադատէ : Միշտ անկման կ'երթանք , և այնպիսի անկման որ անդուղի մը եզելըն է :

Այսպէս մեր հաւատքն ու մեր գիտութիւններն իրար թշնամաննելու համար միայն իրարու կը պատահին . պատերազմը մեր մէջն է , մեզ կապուտ կողազաւու կ'ընէ . և մեր դաստիարակութեան վախճանն ուրիշ բան չէ եթէ . ոչ ան պատերազմին արհաւերը տարածել : Ան ամեն իրարու հետ անմիաբան տարրները , ան ամեն իրարու հակառակ սկզ

ԱՅՈՎԵՅՑԻՆ

Սուրբ Փրկչի վանուց վրայօք բազմահատող մատեաններ կազմելու նիւթթէպէտ շեն պակսիր, բայց մենք բարեկամներուն մէկուն առածը չ հաստատելու համար գեղեցիկ խորհրդածութեան մէկ նիւթը միայն 'ի միիթարութիւն ազգասիրաց աւետենք: Առելինիս հաղորդած բարեկամներնուն ըստծին վրայ ընթերցողք հետաքրքիր ջթողլոյ համար նաև զայն պատմենք:

Յայտնի է մեր Աղդային թերթերուն ժամանակ ժամանակ՝ Սուրբ Փրկչի վանուց վրայ փոթորկալիք լուրեր հալորդենին. աղեկ չեմ յիշեր ո՛ր թերթին ըլլալը, սա իմաստ աղեկ կը յիշեմ որ բաւական մարդկանց ծիծաղը շորժեց երբ ըսուեցաւ: Աղբա՞ր, լորտ ձօն Արքով երբ իր ազգին փիճակներուն վրայ գրիչ ձեռք առնու՝ կը շփոթի թէ ո՛ր գտաւառին վրայ կամ ո՛ր երկրին վրայ գրէ: Զինաստանու՝ թէ Հնդկաստանու, Սմերիկոյ՝ թէ Կորն Աւստրալիոյ, Յունիկան կղզեաց, Եւայլն, Եւայլն: Խեզ Հայ Տէբանբանէ՞ ճակատնին մամուն ալ գնեն. ամենէն ընդարձակ ասպարէղը եւու Խաւունէն դուռնէն դուրս ելածին պէս Փրկիջ հանդիսաւ կ' առնու: Առ ի՞նչ է աղբար . . . բայց ի՞նչ հարկ կայ մատցորդն ըսելու: Մենք խոստմունքնիս կատարելու համար ահա մայիս 26 կիրակէ աւուր նշանաւոր մէկ անցը, համակաղիր բարեկամնուա կը թողունք պատմաւ:

“ Բարեկամ:

“ Եալունթաց կիւրակէ մայիս 26, մինչգեռ աղդայինք Հիւնքեար Խմելէսիի գեղեցկաղիր զրուավայրին վրայ մեր աղդային Սահմանադրութեան դ. Տարեդարձը կը տօնէին, ուրախ եմք ըսելու ականատես բարեկամներէ լուրզ, Ս. Փրկչեան վանուց այն ամենակարեւոր հաստատութեան մէջի պատսպարեալք ալնոյն ընդհանուր իմպակցութեան մաս-

նակից ըլլալու համար վարժարանին անօրէն արգոյ Գրիդոր է փէնտիին որոշմամբ, նոյն առաւոտ, Գեղիցի Տէր Յովհաննէս ծ. վարդապետը վանուց մէջ հանդիսաւոր նորհարաշխութեան խորհուրդ կը մատուցանէ՝ եւ զգեստաւորեալ՝ դպրոցական աշակերտաց քաղցրանուագ թիւնուագ ձայնիւ կիւրամատեալներն օրհնելու սփոփիելու համար վանուց ամեն կողմը կը շրջի յետոյ ոովորականէն մեծարթերութեամբ՝ ընդհանուրին ճաշը մատակարարուելէն վերջը՝ բոլոր աշակերտագրութիւն հարիւ կը համար վանուց դիմացի մարդադետինն ելլեւով: Սահմանադրութեան աղդային երգեր կը նուագ ընդհանուրութեան հետ զբօնիլէն զկնի՝ երեկոյին դարձեալ երգոց ձայնիւ մօտն եղած Սուրբ Յակոբայ եկեղեցին երթալով Հանգստեան ազօթքնին կատարելէն վերջը բարեկարդութեամբ ամիս կը վերադառնան՝ ի Հիւնդամոց, առաւագագութ Կայսեր կենդադանութեան, Աղդիմ պայծառութեան եւ օրհնեալ Սահմանադրութեան անխախտութիւն մակթելով:

“ Արգոյ բարեկամ, խմինդութեան առիթը ասկէ աւելի է զոր ձեզի կը հազարդեմ: Մայիս 30, հինգ շարթի օրն ալ, Սուրբ Փրկչեան ուսումնարանին աշակերտագր այն ինչ ժամը եօթին միջոցները վանուց դիմացի ծառնոցը կ' զբօնուին, յանկարծ աղղային երգոց քաղցրանուագ ձայներ կ' առնեն, եւ ականելով որ Սամաթիոյ թաղին մեր Հայ Հռամէական եղբարց Ս. Աստուածածինն եկեղեցւոյ վարժարանի աշակերտներն են, իրենց մեծարդոյ վարժապետաց տնօրինութեամբը զոյդ զոյդ ի կարգ կայնած քաղցրաձայն երգուլ կը դիմաւորեն յոզդունել զանոնք: “ Եղբայր եղբայր եմք մեք, ընդհանուր զանոնք իսչ կայ սիրուն, քանզանձկալի եղբայր անուն . . . : Մեր Հը-

ատեն զաւակնին ըսէ իրենց որ բան մը
ուզելու իրաւունք չունին . և ունեցած
բաներնէն առանց պայմանի զրկուած են :
Այս ատեն ասոնք ալանոնց գուռը պի-
տի զարնեն օրոնց փոքրիկ ժառանգու-
թին մը տուին , ասոնք ալ իւենցմէ
առանձնաշնորհեալ եղարօր տոնը մա-
տով պիտի ցուցընեն և իրենց հի-
ւանդ , ծեր , անօթի , և զուրս ձգուած
ծնողքը հոն պիտի զրկեն : Եւ իրաւացի
ալ է որ այսպէս ըլլայ : Առաքինի և եր-
կանը սիրությարդանքութիւն քաշող կին
մը Աստուծոյ չնորհած մէկ պարզեն է
զօր աջակով պէտք է որ խնդրուի , և
կրօնից անկեղծ գործադրութեամբը :
Արդ ստակի ամուսնութեան մէջ ոչ ա-
զօթքի և ոչ կրօնքի և ոչ կնկան առաքի-
նութեան խօսք կոյ : Ա.յլ միայն Օժո՛ :
Ամուսնութիւնը մեծամեծ պարտքեր կը
գնէ ամուսնացելոց վրայ փոփօխակի սէր՝
իրարու պահապատութեանց օգնութիւն և
նեցուկ . կենաց վլուտերու մէջ օգնու-
թիւն և պաշտպանութիւն ընտանեաց ,
խնամք , զատափարակութիւն աղայոց ,
երկանը կողմանէ (սիրով բարեխառ-
նեալ) ահմանեալիշխանութիւն , պատ-
կառելի հնազանդութիւն կնոշ : կամաց
համաձայնութիւն , բարի օրինակ իրա-
րու վրայ , զութ և իրարու համար անձ-
նանուիրութիւն : Ա.յս ամէն օրուան և
ամէն վայրիկեանի պարտականութիւննե-
րը անհնար է 'ի գործ ածելառանց Ա.ս-
տուծային չնորհիւ որ ամէն սրտերը կը
պատրաստէ և զանոնք այսպիսի զգաց-
մամբ կըլեցը ուստի կ'ձնանի յարգանք և
քրիստոնէական սէր , որ սորվեցնէ զէշ
միտումները ջնջել բնութեան որոկա-
սութիւնները շտկել , վիշտերը ուրախու-
թեամբ կըել , որ հապարտութիւնը և
բարկութիւնը կ'ասնձէ , որ հակառակու-
թեանց մէջ համբերութիւն կ'ազդէ և
թշուառութեանց ու աղքատութեանց
մէջ երկայնամոռութիւն : Ամսանիք ,
իրենց կենացը մէջ , պէտք է որ բոլոր այս
բրամազրութեամբք զինեալ լինին : Ուս-

տի Աստուած , որ ամենայն վիճակի հար-
կաւոր եղած միջոյները պատրափառած
է զանոնք աղէկ կատարելու համար՝ խօր-
հրդոյ իարգին բարձրացուցեր է . որպէս
զի ամսանացողք ունենան այս բազմա-
թիւ չորհքները որոնց կապեալ է իրենց
ընտանեաց երջանկութիւնը : Բայց որ-
պէս զի ամսանացութեան խորհրդը իրեն
յատուկ եղած չորհիւը գործադրուի ,
ուստի ամսանիք կ'պարտաւորին վայելուն
պատրաստութիւն մը խղճի մաքրութիւն ,
գիտակորութիւն ուղղութեան և ապ-
րել ըստ Աստուածային օրինաց սուրբ
վիճակի մէջ : Ա.րդ անոնք որ ամսանա-
նալով միայն Օժու կ'զնութը ան պաշտօն
մը ունենալու , զետիններ գնելու , կամ
վաճառականութիւն մը հիմնելու համար
անփոյթ կըլան խորհրդոյ չորհքներն
ստանալու : Ամուսնական ասպարեզին
մէջ առաջին քայլերնին սրբապղծու-
թեամբ մը կըսկսին : Ամուսնութեան
որհնութիւնը իրենց նայելով սրիշ բան
չէ բայց եթէ սովորութիւն մը նուիրա-
կան եղած և նշանած աղջկանը համար
պիծմամբ ընդունուած նուիրական պարտք
մը : Երբոր երիկ մը կնիկը միայն սուսեի
համար կը բննէ , ամենեին հոգը ըլլար
այն կնկանը հաճոյ երենալ և զանի եր-
ջանիկ լինել , մէջ մը որ ստակը ծոցը զը-
նէ : Երբոր ամուսնք միայն ստակը գի-
տեն , իրենց զաւակունքը կըթելու և ա-
նոնց վարպետներ տալու , հարկաւ որ ե-
ղած ծախը կ'իմնայեն : այս ատեն աղ-
պայք ալ իրենց գէշ ձիթերուն կ'նուիրեն
ինքնիքնին : Ա.երջային ։ ծեր ծնողք ,
իրենց զաւակացը հարուստ աղեղեր զըտ-
նելու համար ունեցածներէն կըզրկիւն :
Երբոր տղագ կը կարգես՝ անոր հա-
մար ամէնէն խելօր և քրիստոնեայ աղջկը
ուզէ : Եւրբը հարստութեան նոյնէ
Քաջաբարոյ , առաքինի , կրօնակեր երի-
տասարդին ալ աղջկանդ համար ամենէն
լաւ բանն է :

Յագուար Պարտիկուանէն

ԽՄԲԱԴԻՐ-ՏՆՈՐԷՆ

Ա. ՃԻՎԱՀԻՐՃԵԱՆ

Ա. ՀԱՄԱԶԳԱՍՏԻ ՏԱՄՐԱՆ